



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



46

առք յարէ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Գրադարան «Ապահով»-ի № 1

ԱՀՀ

113

ՊԼԵԱՏԵ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ  
(ՀԱՄԱԴՐԱՄԱՑ)



Տպարան Ա. Բաբաջանեանի, Եղանձում.

1920



113 - Ch 97

Մեր ստացած ազատութիւնը մեղ  
իրաւունք է տալիս հաւաքւել, ժողով-  
ներ անել մեր ցաւերի, նեղութիւնների,  
պահանջների մասին խորհուրդ անել,  
վճիռներ կայացնել և յայտնել, ուր որ  
հարկն է:

Մեծ քաղաքներում ամեն շաբաթ  
այդ տեսակ ժողովներ են լինում: Բան-  
ուոր - արհեստաւորները իրենց միջից  
մարդիկ -- պատգամաւորներ են ընտ-  
րում, որոնք մի տեղ հաւաքւելով ի-  
րենց դրութեան մասին մտածում,  
խորհուրդ են անում: Նոյնպէս գիւղա-  
ցիները պատգամաւորներ են ընտրում,  
ուղարկում, որ իրենց մասին մտածեն:  
Ժողովներ են անում ուսուցիչները, հո-  
գեորականները, վաճառականները և  
այլն:

Մի խօսքով հիմա մի այնպիսի ժա-  
մանակ է, որ ամեն գործի, պարապ-  
մունքի մարդիկ ժողովներ են անում,  
որ իրենց դրութիւնը պարզեն, որոշեն,

իրենց ցանկութիւնները, պահանջները  
յայտնեն: Բացի այս տեսակ ժողովնե-  
րից, լինում են և ազգային ժողովներ:  
Ամեն ազգ ունի իր առանձին ցաւերը,  
նեղութիւնները. այնպիսի հարցեր կան,  
որոնք միայն գիւղացուն, բանւորին,  
ուսուցչին չեն վերաբերում, այլ ա-  
մենքին և բոլորը պէտք է հաւաքւեն  
ու միասին վճռեն: Արդէն շատ ազ-  
գեր ունեցել են իրենց ժողովները:  
Միը հարեան թուրքերն էլ Բավում  
ունեցան այստեսակ ժողով, ուր երկար  
խօսել են իրենց գրութեան, իրաւունք-  
ների, պահանջների մասին վճիռներ  
կայացրել և յայտնել ժողովրդին ու  
կառավարութեան:

Մենք, Ռուսաստանի հայերս էլ շատ  
ցաւեր ունինք, մեծ նեղութիւնների  
մէջ ենք, մեզ էլ հարկաւոր էր շատ  
հաւաքւել, ժողով անել: Բայց Թիֆլի-  
սի և ուրիշ մեծ քաղաքների նշանա-  
ւոր գործիչները, կուսակցութիւնները  
գտան, որ լաւ չէ վոազել, այլ հարկա-  
ւոր է գրա համար պատրաստութիւն-

ներ տեսնել, այնպէս անել, որ բոլոր  
ժողովուրդը մասնակցէ ազգային ժո-  
ղովին:

Դրա համար ընտրւեցին կուսակցու-  
թիւններից, ընկերութիւններից, հաս-  
տատութիւններից ներկայացուցիչներ,  
որոնք մի ժողով կազմեցին, որը կոչ-  
ւեց միջկուսակցական յանձնաժողով։  
Այդ ժողովը երկար աշխատելով, ար-  
դէն պատրաստել է ամեն ինչ. այ-  
սինքն թէ ազգային ժողովը ի՞նչ հար-  
ցել պիտի քննէ և թէ ովքեր և ի՞նչ-  
պէս պէտք է մասնակցեն ընտրու-  
թիւններին։

Ազգային ժողովում պէտք է քննւեն  
այս հարցերը.

1. Վերաբերմունք դէպի ներկայ քա-  
ղաքական մոմենտը, դէպի ժամանա-  
կաւոր կառավարութիւնը և դէպի պա-  
տերազմը.

2. Ռուսաստանի ապագայ քաղաքա-  
կան կազմը.

3. Անդրկովկասի ապագայ քաղաքա-  
կան կազմը և նրա կուպը Ռուսաստա-

Նի հետ:

4. Փոքրամասնութեան իրաւունքը.

5. Հողային հարցը: Դիւղացու տընտեսական վիճակը:

6. Լեզուների իրաւունքը պետական հիմնարկութիւնների մէջ.

7. Դպրոցական խնդիրներ (տեսական դպրոցների ազգայնացում, ազգային դպրոցներ, կազմարեան ձեմարան):

8. Եկեղեցու փոխարարերութիւնը պետութեան հետ:

Այս հարցերը շատ մեծ, դժւար հարցեր են, հարկաւոր է լաւ մտածել, հասկանալ և այնպէս մարդիկ ընտրել Ժողովի համար, որ նրանք կարողանան ուղած, ցանկացած ձևով վճռել:

Առաջ հարկաւոր է բացատրել այդ հարցերը:

Մուսաստանում մի շատ մեծ փոփոխութիւն է կատարւել, որը դեռ չի հաստատվել: Վերացւել են հին կառավարութիւնը, թագաւորութիւնը, հին օրէնքները, կարգերը, և երբ մեծ ժողովներ են լինում, այնտեղ վճռում

են թէ ընդունում են այդ բոլորը և  
ի՞նչ ձևով։ Մենք էլ որպէս ազգ, որ  
հաւաքւենք, պէտք է յայտնենք թէ  
ի՞նչպէս ենք ընդունում այդ բոլորը։  
Ի՞նչ խօսք, որ այդ բոլորը մեր որտովն  
է, ոչ մի ազգ գուցէ այնքան չի տանջ-  
ւել, որքան մենք, դրա համար էլ մենք  
հոգով, որտով պէտք է ընդունենք այդ  
բոլոր փոփոխութիւնները, ցանկանանք  
և պահանջենք, որ ժամանակաւոր Կա-  
ռավարութիւնը գտնուի Ժողովրդին բա-  
րեկամ մարդկանց ձեռքում, մինչև որ  
ժողովուրդը կասէ, թէ ի՞նչ տեսակ  
կառավարութիւն է ցանկանում։

Ի՞նչ վերաբերում է պատերազմին,  
մեր բոլորի ցանկութիւնն է, որ պա-  
տերազմը շուտ վերջանայ. Հարկաւոր  
չի թշնամուն անպատճառ յաղթել,  
նըանից երկիրներ խլել, մեծ փողեր  
պահանջել, այլ այնպէս հաշտւել, որ  
ոչ մի ազգ էլ չվնասուի մէջ տեղ, ոչ  
ոքից ոչինչ չխլւի, բոլոր ազգերն էլ  
ստանան իրենցը և ազատ ապրեն։

Թուստանում սեպտեմբեր ամսում

պէտք է լինի մի մհծ ժողով, որը կոչ-  
ւում է Սահմանադիր Ժողով. այդ ժո-  
ղովում պէտք է որոշվի թէ ինչ տեսակ  
կառավարութիւն պէտք է լինի և ինչ  
օրէնքներ, կարգեր են հարկաւոր։ Այ-  
ժըմւանից հարկաւոր է դրա համար  
պատրաստել, մտածել, որ յետոյ ուշ  
չլինի կամ այնպէս դուրս չգայ, որ էլի  
մասւենք, տանջւենք։

Հիմա համարեած թէ ամեն տեղ էլ  
վերացւած է թագաւորութիւնը և թա-  
գաւորի տեղ կառավարում, օրէնքներ  
են տալիս ժողովրդից ընտրւած մար-  
դիկ։ Հիմա ժողովուրդը ամեն տեղ  
լուսաւորւում է, նրա աչքերը բաց-  
ւում են, տեսնում է որն է լաւը, իրեն  
օգտակարը և նրա յետենից էլ զնում է։  
Ամեն տեղ էլ փորձը ցոյց է տւել, որ  
երբ կառավարութիւնը ժողովրդական  
է, ժողովրդից ընտրւած մարդկանց  
ձեռքում է, ամեն ինչ կարգին է զնում,  
ժողովուրդը չի նեղւում հարկերից, աղ-  
բում է լաւ, բարեկեցիկ։ Հիմա Թու-  
սաստանում բոլորն էլ ուղում են, որ

լինի իսկական ժողովրդական կառավարութիւն, որին ասում են ուսմկավարական հանրապետութիւն։ Մենք էլ պէտք է մեր կողմից այդպիսի կառավարութիւն պահանջենք, քանի որ ուս թագաւորներից շատ ենք ցաւեր, նեղութիւններ, տանջանքներ քաշել։ Էլ հինը չպէտքէ կրկնւի։ Բայց այդ նոր Ռուսաստանն այնպէս պէտք է կազմւի, որ բոլոր ազգերն էլ ազատ լինին, լիզւի, կառավարութեան և այլ կողմերից չնեղւեն, ուսներին չենթարկւեն, որպէս տիրող ազգի։

Դրա համար էլ ամեն մի երկիր պէտք է իրա համար որոշ իրաւունքներ ունենայ, ոչ թէ Ռուսաստանից եկած, ուս կառավարութեան կողմից նշանակւած մարդկանցով կառավարւի, այլ ինքն իրեն, լինի, ինքնավար։

Օրինակ մենք հայերս, վրացիները, թուրքերը և ուրիշ ազգեր, որ ապրում ենք, միասին մի երկրում, որին Անդրքիովկաս են ասում, պէտք է պահանջենք, որ մեր երկիրը ունենայ իրա

առանձին կառավարութիւնը, կարգերը, օրէնքները, հարկերը և այլն, նայած նրա հանգամանքներին։ Բայց այս չի նշանակում, որ մենք ուզում ենք Ռուսաստանից բոլորովին բաժանուել և առանձին, անկախ լինել։ Եթի մեր երկիրը Ռուսաստանի մի մասն է հաշւելու, Եթի շատ բանելով կապւած ենք լինելու, ինչպէս օրինակ զօրքի, փողի, առեարի և ուրիշ կողմերից։ Ինչպէս մեծ ու փոքր եղբայր են լինում, թէն ջոկ-ջոկ, բայց հայրական ժառանգութեամբ կապւած, այնպէս էլ ուսու մեծ աղջը և նրա հետ միացած միւս փոքր աղջերն են լինելու։ Այս տեսակ պետութիւնը կոչւում է դաշնակցական պետութիւն։

Ուրեմն մենք պէտք է պահանջենք Ռամկավարական դաշնակցական հասարակապետութիւն, այսինքն որ բոլոր երկրներն, աղջերը Ռուսաստանի պէտք է իրենք—իրենց կառավարեն, շատ բանելում անկախ, ինքնուրոյն լինեն, բայց դրսի և սնտեսութեան

վերաբերեալ գործերում միացած, որպէս դաշնակիցներ:

Իսկ Անդրկովկասում ի՞նչպէս պէտք է հայ, թուրք, վրացի և այլն ազգեր միանան և մի պետութիւն կազմեն: Այս շատ գժւար բան է, բայց կարելի է, Անդրկովկասում ամեն մի ազգ, գլխաւորապէս հայ, թուրք, վրացի էլի շատ ներքին գործերում պէտք է իրարից անկախ լինեն, ինքնուրոյն, իրենք իրենց գործերը կարգաւորեն, իսկ բոլոր այն խնդիրներում, որ վերաբերում է ամբողջ Անդրկովկասին՝ միացած, որպէս դաշնակիցներ: Աւելի պարզ ասեմ:

Պէտք է նահանգները, գաւառները նորից կազմել և այնպէս անել, որ համապատասխան լինի առանձին ազգերի տարածման—բոնած տեղին: Այսինքն այն նահանգները, որոնք խառն ազգարնակութիւն ունին, պէտք է այնպէս կտրտել, նոր մասեր կպցնել, որ գերակշռողը թւով կամ բոլորովին մի ազգութիւն լինի: Օրինակ՝ Գանձակի

նահանգում մեծ ժամը բնակիչների  
կաղմում են մեր հարևան թուրքերը,  
թէս կան և շատ հայեր։ Բայց եթէ  
Գանձակի նահանգը երկու մասի բա-  
ժանենք, նրանից կտրենք Շուշու, Զան-  
գեզուրի գաւառները, Ջևնշիրից, Կար-  
եաղինից հայ բնակչութիւն ունեցող  
մասերն և մի առանձին նահանգ կող-  
մենք, այն ժամանակ այդ տեղերում  
հայերը մեծամասնութիւն կլինեն, իսկ  
մնացած մասում՝ թուրքերը։ Մենք  
պէտք է պահանջենք, որ ամեն տեղ  
այդպէս անեն, նահանգները, գաւառ-  
ները նորից բաժանեն, որպէսզի ամեն  
մի տեղ մի ազգ մեծամասնութիւն  
կաղմի։

Իսկ սա ի՞նչ նշանակութիւն ունի։  
Սա շատ կարևոր է։ Եթէ ասում  
ենք, որ որանից յետոյ ամեն ազգ  
պէտք է ազատ, ինքնուրոյն լինի, ամեն  
ինչ իրա լեզով, ինչպէս օրինակ դըպ-  
րոցները, պետական հաստատութիւն-  
ները (ոստիկանատան, դատարան,  
փոստ և այլն), այն ժամանակ հար-

կառոր է, որ ազգերը խտոր չլինին,  
այլ ամեն աեղ մի ազգ մեծամասնութիւն կազմի:

Այսպէս ուրիշն Անդրկովկասը պէտք է նորից բաժանել նահանգների ըստ ազգութիւնների: Այդ նահանգները կոչւելու են կանոններ և դրանից իւրաքանչիւրն ունենալու է իւրներքին անկախութիւնը շատ բաներում. (պաշտօնեաներին, կառավարիչներին այդաղ ժողովուրդն է ընտրելու. զպրոցներում, պետական բոլոր հաստատութիւններում տեղական լեզուն է իշխելու և այլն): Բայց այդ բոլոր կանոնները միացած կազմելու են Անդրկովկասի դաշնակցութիւնը, որը ունի ժողովրդական ներկայացուցչութիւն բոլոր ազգերից կազմւած, և որը ընդհանուր օրէնքներ է տալիս և ընդհանուր գործերը կառավարում:

Եթէ այդպէս բաժանենք նահանգները, էլի տեղեր կըլինեն, որ ազգերը խառը կապրին. կըլինի մէկի մեծամասնութիւն, միւսի փոքրամասնու-

թիւն և այդ փոքրամասնութիւնը կարող է նեղւել սհծամասնութիւնից: Պէտքէ այդ մասին էլ մտածել և այնպէս անել, որ փոքրամասնութիւնը չնեղւի, տռանձին օրէնքներով նրա գրութիւնը, իրաւունքները որոշեն: Մի խօսքով այնպէս պէտք է անել, որ ոչ մի ազգ միւսին սրանից յետոյ չընեղի, նրա վրայ իրաւունքներ չբանեցնի: Ազգային ժողովում քննուելու է և մի շատ մեծ, դժւար հարց, որ մեր զիւղացիներին է վերաբերում. այն է հոգային հարցը և սեր զիւղացիների դրութիւնն առնասարակ:

Հայ, թուրք, վրացի և այլ ազգի զիւղացիները հին կառավարութիւնից, թագաւորներից շատ են մնաւել: Հողերը զիւղացիներից խլել են և տւել տէրութեան ծառայողներին, մեծամեծներին, բէգերին և ազաներին: Այնպէս որ, նաև ով հողի հետ կոիւ է տալիս, ամբողջ տարին տանջւում, չարչարւում հող չունի կամ քիչ ունի, իսկ ով ոչինչ չի անում, նստած քաղաքնե-

բում անհաշիւ ծախսում, փաղեր է փչացնում՝ հողերի տէր է։ Սա մի անարդարութիւն է, որ պէտք է յեղափոխութիւնը վերացնէ։

Արդէն ամեն տեղ գիւղացիական ժողովներ են եղել և պահանջել են, որ բոլոր հողերը, լինեն զա տէրութեան, ըէղերի, իշխանների, հարուստների, վաճառքերի և այլն, պէտք է տալ գիւղացիներին, այն էլ ձրի, առանց փող վճարելու։ Բայց այդ բաւական չէ։ Գիւղացիք ի՞նչպէս պէտք է օգտւեն, այդ հողերը ի՞նչպէս պէտք է բաժանել նրանց մէջ։

Գիւղացիների օգուտը պահանջում է, որ բոլոր հողերը համարւեն համայնական, այսինքն ոչ ոք իր սեփական հողը չունենայ, այլ հողը պատկանի բոլորին։ Այդ հողը յետոյ կը բաժանեն գիւղացիների մէջ այնպէս, որ ով ինչքան հարկաւորութիւն ունի, այնքան էլ վերցնի։ Հողը կը տան միայն գիւղացիներին, իսկ ով ելելքործութեամբ չի պարապում, նա հող չի

ստանայ: Հողը, ինարկէ, գիւղացուն  
մշտական չեն տալիս, այլ ժամանա-  
կաւոր: Եթք մի որոշ ժամանակ անցնի  
(օրինակ 5, 8, 10 տարի), պիտի նո-  
րից բաժանել, որպէսզի ամեն մարդ  
ստանայ այնքան, որքան հարկաւորու-  
թիւն ունի: Եթէ այս ընդունեի, ուրեմն  
պէտք է արգելուի հողի առուծախոը,  
ոչ ոք սեփական հող չպէտք է ունենայ,  
հողը պիտի համարւի ընդհանուրի սե-  
փականութիւն:

Ազգային ժողովում այս մասին խօ-  
սելու հն և վճիռ են կայացնելու, որ  
յիտոյ տէրութեան միջոցով օրէնք  
դառնայ: Գիւղացիները պէտք է այն-  
պիսի մարդկանց ընտրեն ազգային ժո-  
ղովի համար, որ նրանք հողի հարցն  
այսպէս վճռեն: Այս է պահանջում գիւ-  
ղացիների օգուտը: Բացի հողային հար-  
ցից, ազգային ժողովում քննուելու հն  
առհասարակ մեր գիւղացիների դրու-  
թիւնը, թէ ի՞նչպէս անեն, որ գիւղա-  
ցիներին աղատեն այն նեղ, ծանր դրու-  
թիւնից, որի մէջ պահում են: Վերջին

Ժամանակները հոգի քչութեան, շատ  
հարկերի, տուրքերի, երաշտի, պատե-  
րազմի և այլ պատճառով գիւղացիք  
բոլորովին աղքատացել են, չունեն ա-  
նասուններ, սելմացու, գործիքներ,  
մնացել են դատարկ, անօգնական։ Աղ-  
գային ժողովում պէտք է մտածեն մի-  
ջոցներ գտնեն տէրութեան կամ զա-  
նազան լնկերութիւնների օգնութեամբ  
գիւղացիների գրութիւնը լաւացնելու,  
թոյլ չտան որ նրանք բոլորովին աղ-  
քատանան։ Դրա համար պէտք է գիւ-  
ղացիք այնպիսի մարդկանց ուղարկեն  
ազգային ժողով, որ իրենց ցաւը, դար-  
դը պատմեն։

Աղգային ժողովում պէտք է պահան-  
ջեն, որ սրանից յետոյ փոստում, դա-  
տարանում, ոստիկանական հաստա-  
տութիւններում, երկաթուղիներում և  
այլ պաշտօնական տեղերում տեղական  
լեզով, հայերէն խօսեն և ոչ ոռւսերէն,  
ինչպէս առաջ էր։ Խեղճ գիւղացին, որ  
ոռւսերէն չգիտէր, մնում էր բերանը  
փակ, դարդը սրտում։ Այժմ երբ այդ

պահանջն ընդունեի, նա կարող է իր լեզով, իր քերանով իր ցաւը պատմել, գանդատ անել կամ բողոքել: Նոյնպէս խնդիրները, նամակները և այլն իր լեզով կը գրի և տեղ կանցնի և ոչ թէ առաջւայ նման օրան-նորան վիզ կը ծռի, փող կը տայ, որ ոռուերէն դրին:

Նոյնպէս պէտք է ազգային ժողովը պահանջէ, որ տէրութիւնը իր հաշւով պպրոցները շատացնէ, բոլոր գիւղերում դպրոցներ բաց անէ. ուսումը ձրի լինի, երեխաները իրենց լեզով սովորեն, ոչ միայն ոռուերէն, ինչպէս առաջ էր: Բոլոր եղած դպրոցներում պէտք է սրանից յետոյ գլխաւոր տեղը բռնի մայրենի լեզուն, մեզ համար հոյերէնը և յետոյ մնացածը: Սրանից յետոյ պէտք է դպրոցներում շատ բան անցնել մայրենի լեզով, իսկ ոռուերէնն ինչպէս օտար լեզու սովորեն, որը իհարկէ, շատ հարկաւոր է:

Ազգային ժողովում էլ ուրիշ շատ հարցեր են քննւելու: Մի խօսքով, հա-

յոց աղգին վերաբերեալ ինչ որ հարցեր կան, պէտք է այնտեղ քննւեն, պարզւեն, որ յետոյ կարելի լինի անցկացնել:

Սրանից երկում է, թէ որքան սեծ նշանակութիւն ունի աղգային ժողովը, և ամեն մէկը մեղնից պարտաւոր է հասկանալով իր ձայնը տալ այնպիսի մարդկանց, որ իւր ցանկացածը պաշտպանեն, պահանջեն աղգային ժողովում:

Աղգային ժողովի ներկայացուցիչներ, պատգամաւորներ պէտք է ընտրւեն թուսաստանի ամեն կողմերի հայերից: Շուշու, Զանգեզուրի և Դիղոկի գաւառների հայերը պէտք է ընտրեն 22 պատգամաւորներ: Ընտրութիւնն այսպէս է լինելու: Ամեն մի չափահաս հայ, կին թէ տղամարդ, որ 20 տարեկանից անց է, իրաւունք ունի ընտրութեան մասնակցելու: Ընտրութիւնները լինելու են օդոստոսի 6-ին. այդ օրն ամեն գիւղում պէտք է հաւաքւեն բոլոր ընտրուները և իրենց ձայնը տան: Դրանից առաջ մի քանի մարդիկ են

ընտրւելու՝ ձայնիրը հաւաքելու համար։  
Մի քանի օր առաջ կուսակցութիւն-  
ները յայտնելու են ժողովրդին, թէ որ  
մարդկանց պէտք է ընտրել՝ որպէս  
պատգամաւորներ։ Ընտրութիւնից երեք  
օր առաջ կուսակցութիւնների մարդիկ  
ընտրողներից ամեն մէկին տալու են  
մի թուղթ, որի մէջ գրւած է, թէ նա  
որ կուսակցութեան է ձայն տալիս։  
Ընտրովներն ազատ են, որ կուսակ-  
ցութեան հաւանում են, նրա թուղթը  
կը վերցնեն և ընտրութեան օրը կը  
տան ձայն հաւաքողներին։ Որ կուսակ-  
ցութիւնը շատ ձայն ստանայ, նրա  
առաջարկւած մարդիկ են ընտրւելու։

Գիւղացիների օգուտը պահանջում է,  
որ կին թէ տղամարդ, բոլորն էլ մաս-  
նակցեն ընտրութիւններին, իրենց  
պաշտպան կուսակցութեան ձայն տան,  
թէ չէ կը նորուեն այնպիսի մարդիկ,  
որ իրենց հակառակ կը լինին, զնան  
կը տան։

Իսկ որ կուսակցութեան պէտք է  
ձայն տալ, Հայ աշխատաւորը, գիւղա-

ցին մինչև այժմ մի կուսակցութեան է ճանաչում, որ գիւղում, գործարանում երեսում, խեղճի, անճարի համար ցառում, մտածում է։ Այդ կուսակցութիւնը Հայ Յեղափի. Դաշնակցութիւնն է։

Դաշնակցութիւնն է, որ միշտ նեղու լայն օրերին ժողովրդի մէջ է եղել, ժողովրդի համար է չարչարւել։ Դաշնակցութեան մարդիկն են, որ մոռացել են իրենց տունը, տեղը, ընտանիքը, ծնողներին, ժողովրդի համար չարչարւել, բանտի, աքսորի մէջ տանջւել, կախաղան բարձրացել, որ ժողովրդի համար լաւ օրեր բերեն։ Ամենը լաւ յիշում են, թէ ինչպէս Դաշնակցութեան մարդիկ իրենց կեանքն էին դրել ժողովրդի համար, աղատելու կոտորածներից, թալաններից. և եթէ չկնէին դաշնակցականները, ովք գիտէ, թէ ինչ կը լինէր ժողովրդի դրութիւնը։

Այսօր էւ էլի Դաշնակցութիւնն է, որ ցաւում, մտածում է ժողովրդի համար։ Ամեն տեղ էլ ժողովուրդը այդ շատ լաւ գիտէ և գնահատում է։ Դաշ-

նակցութիւնը հայերի մէջ ամենամեծ  
կուսակցութիւնն է, ամեն տեղ նրան  
են ընդունում, ոչ միայն Անգրկովկա-  
սում, այլ և Թուսաստանի բոլոր կող-  
մերում, ուր հայեր կան:

Ազգային ժողովում Դաշնակցութիւնն  
է, որ այս բոլոր հարցերը պաշտպանե-  
լու է աշխատաւոր ժողովրդի օգտին.  
և որքան նրան շատ ձայն տան, այն-  
քան այդ լինելու է աշխատաւորների,  
գիւղացիների օգտին:

Ուրեմն պէտք է ձայն տալ աշխա-  
տաւորների, գիւղացիների պաշտպան  
բարեկամ Հայ Յեղ. Դաշնակցութեան:

Ընտրողներ, կին թէ տղամարդ,  
վերցրէք Հայ Յեղափոխական Դաշնակ-  
ցութեան թղթերը և ձայն տուէք Հայ  
Յեղափոխական Դաշնակցութեան:



U92

113